



Պարենային անվտանգության և գյուղատնտեսության ամփոփագիր



Հայաստան
2012թ. ապրիլ - հունիս


Հիմնական դրույթներ

- **Սպասվում է, որ գյուղատնտեսական արտադրության ծավալները 2012թ.-ին կգերազանցեն նախորդ տարվանը, թեկուզև 2011թ.-ը Հայաստանում լավ տարի է եղել գյուղատնտեսության համար:**
- **2010թ.-ին աղքատության առավելագույն ազդեցությունը կրող մարզերն են եղել Լոռին, Շիրակը, Կոտայքը և Գեղարքունիքը:**
- **Հացահատիկ ներկրումների ծավալը 2012թ.-ի հունվար-հունիս ամիսներին 11%-ով գերազանցել է 2011թ.-ի. առաջին կիսամյակին գրանցված գուցանիշը:**

Պարենային անվտանգության և աղքատության իրավիճակ

Հայաստանում աղքատությունը պարենային անապահովության հիմնական պատճառն է: 2009թ.-ի կտրուկ տնտեսական անկման հետևանքով աղքատության մակարդակը 2010թ.-ին հասել է 35,8%-ի՝ 2008թ.-ի 27,6%-ի համեմատ: Մարզերի միջև այս առումով առկա են տարբերություններ:


Աղքատության մակարդակը ըստ մարզերի



Կից [քարտեզում](#) ցույց են տրված ծայրահեղ աղքատ, շատ աղքատ և աղքատ բնակչության տոկոսաչափերը և աղքատության մակարդակը յուրաքանչյուր մարզում (ավելի մանրամասն տես www.armstat.am: ՀՀ ԱՎԾ):

Հիմնվելով սովի տարածվածության վերաբերյալ առկա վերջին (2006-08թթ.) տվյալների վրա, Հայաստանը թերսնվող բնակչության իր 21% ցուցանիշով դասվել է սովի տարածվածության միջին-բարձր մակարդակ ունեցող երկրների թվին (ՊԳԿ):



ՊԳԿ սովի տարածվածության սանդղակ (ըստ թերսնվողների %-ի)



Պարենամթերքի գներ

2012թ.-ի առաջին կեսին պարենամթերքի գները 2011թ.-ի նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 1,5%-ով: Մակայն հաշվետու ժամանակաշրջանում դրանք նվազել են միջինում 3%-ով, թեև շարունակելով մնալ ռեկորդային բարձր մակարդակում: 2012թ.-ի ապրիլին պարենամթերքի գնային ինդեքսը մարտ ամսվա համեմատ կազմել է 98,6%, մայիսին՝ 97,4% ապրիլի համեմատ, իսկ հունիսին՝ 97,2% մայիսի համեմատ:

Հաց. 2012թ.-ի մարտ (430 ՀՀ դրամ) և հունիս (432 ՀՀ դրամ) ամիսների միջև ընկած ժամանակահատվածում հացի գները գրեթե կայուն են մնացել ռեկորդային բարձր մակարդակում: 2012թ.-ի ապրիլ-հունիս ամիսներին միջին գինը մոտ է եղել նախորդ տարվա նույն ժամանակահատվածի գնին:



Պարենային անվտանգության ցուցիչներ*

(Ժամանակային տվյալները առկա են: www.foodsec.org/ar կայքում)

Տնտեսական ցուցանիշներ		Տարեթիվ
ՀՆԱ-ի աճ (%)		4.7 2011
Բնակչության թվաքանակը (մլն)		3.3 2011
Բնակչության աճը (%)		0.3 2011
Գյուղատնտեսության տոկոսաբաժինը (%)		36 2010
Կանքի սպասվող տևողություն (տարի, կանայք/տղամարդիկ)		77/71 2010
Գործազրկություն (%)	Ընդհանուր	19 2010
	Գյուղատնտեսության	6 2010
Պետական բյուջեի տոկոսաբաժնով արտահայտված սոցիալական պաշտպանության ծախսերը (%)		28 2011
Սպառողական գների ինդեքս (2009=100)		108 2010
Պարենամթերքի գների ցուցիչ (2009=100)		112 2011
ՀՆԱ-ի տոկոսաբաժնով արտահայտված դրամական փոխանցումները (ՀԲ)		9 2010
Հացահատիկ ներմուծումը արտահայտված ընդհանուր ներկրումների արժեքի տոկոսաբաժնով		8 2011

Գյուղատնտեսական ցուցանիշներ		Տարեթիվ
Գյուղատնտեսության տոկոսաբաժինը ՀՆԱ-ում (առանց վերաձևակող արդյունաբերության) (%)		20 2011
Բուսաբուծության և անասնաբուծության մասնաբաժինները գյուղատնտեսության համախառն արտադրանքում (%)	Բուսաբուծ.	55 2011
	Անասնաբուծ.	45 2011
Աշխատուժի համամասնությունը գյուղատնտեսությունում (%)	Ընդամենը	45 2010
	Կանայք	56 2010
	Տղամարդիկ	44 2010
Գյուղացիական տնտ. միջին հողատարածքը (հա)		1.4 2006
Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների ինդեքսը (2010=100%)		117 2011
Ամսական միջին աշխատավարձը գյուղատնտեսությունում՝ ըստ սեռերի (ՀՀ դրամ)	Կանայք	61 369 2010
	Տղամարդիկ	73 270 2010
Հողի սեփականատիրության հասանելիությունը կանանց համար (ՄԱԶԾ)	Լիակ. հասան.	2009


Այլ ցուցանիշներ *		Տարեթիվ
Աղքատության մակարդակ (%)	Ընդ.	36 2010
	Գյուղատնտ.	36 2010
Մենդամթերքի վրա կատարվող ծախսերի բաժինը՝ ընդհանուր ծախսերի համեմատ (%)	Ընդ.	53 2009
	1-ին քվինտիլ	56 2009
Առաջին անհրաժ. սննդամթերքի (հացահատիկ և կարտոֆիլ) բաժինը՝ կարտոֆիլների ընդհանուր սպառման մեջ (ՊԳԿ) (%)		47 2007
Կենդանական ծագման սպիտակուցների բաժինը՝ կարտոֆիլների ընդհանուր սպառման մեջ (ՊԳԿ) (%)		10 2007
Թերսնվող բնակչությունը 2005-2007թթ. (ՊԳԿ) (%)		22 2005
Երկաթի պակասության մակարդակը կանանց շրջանում (սակավարյունություն, 15-49 տար.) (%)		25 2005
Թերաճի մակարդակը մինչև 5 տարեկան երեխաների շրջանում (%)		19 2010
20% ամենացածր եկամտունեքով բնակչության եկամտունեքի տոկոսաբաժինը (ՀԲ) (%)		6.6 2009

* Սկզբնաղբյուր՝ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն (ԱՎԾ), եթե այլ նշում չկա

Այդուհանդերձ, ցորենի գները 2012թ.-ի ապրիլ-հունիս ամիսներին 17%-ով նվազել են 2011թ.-ի նույն ժամանակահատվածի համեմատ: 2012թ.-ի II եռամսյակում 1կգ ցորենի գինը կազմել է 177 ՀՀ դրամ, ինչը 2,3%-ով ցածր է 2012թ.-ի I եռամսյակի գնից (181 ՀՀ դրամ):

Կարտոֆիլ. Հայաստանում առաջին անհրաժեշտության սննդամթերք հանդիսացող կարտոֆիլի գինը 2012թ.-ի մարտից հունիս ընկած ժամանակահատվածում, բերքահավաքից հետո, նվազել է 21%-ով: Գների մակարդակը զգալիորեն ցածր է եղել նախորդ տարվա համեմատ: 2012թ.-ի ապրիլ-հունիս ամիսների միջին գինը 34%-ով ցածր է եղել 2011թ.-ի նույն ժամանակաշրջանի համեմատ:

Տավարի միս. 2012թ.–ի ապրիլից հունիս ընկած ժամանակահատվածում տավարի մսի գինը փոքր–ինչ նվազել է: Տավարի մսի գինը 2009թ.–ի վերջից սկսած անդադար աճ է ապրել մինչև 2011թ.–ի կեսերը, որից հետո մնում է համեմատաբար կայուն մակարդակում:



Գյուղատնտեսական արտադրանք

ՀՀ Գյուղնախի կանխատեսմամբ՝ գյուղատնտեսական համախառն արտադրանքը 2012թ.–ին գերազանցելու է 2011թ.–ի համապատասխան ցուցանիշը, ընդ որում, 2011թ.–ը Հայաստանում լավ տարի է եղել գյուղատնտեսության համար: Լավ արդյունքներ են սպասվում թե՛ բուսաբուծության, և թե՛ կենդանաբուծության բնագավառներում: Ակնկալվում է, որ բոլոր հիմնական գյուղմթերքների գծով արտադրության ծավալները բարձր կլինեն 2011թ.–ի մակարդակից և 2007–2011թթ. միջին ցուցանիշից:

Լավ արդյունքները վերագրվում են բարենպաստ եղանակային պայմաններին, արտադրության արդյունավետ մեթոդների (այդ թվում՝ ճիշտ ֆիտոսանիտարական միջոցների) կիրառմանը և պետական քաղաքականության միջոցառումների դրական ազդեցությանը:

Եղանակային պայմանները ընդհանուր առմամբ բարենպաստ են եղել պտղի և բանջարեղենի, բայց ոչ այնքան՝ ցորենի համար: Ցորենի բերքատվության կանխատեսումները դրական չեն: Բացի այդ, ցորենի ցանքը հիմնականում ուշ է կատարվել, իսկ ագրոնոմիական կանոնները (օր. ոռոգումը) ամբողջությամբ չեն պահպանվել ֆինանսական միջոցների պակասի պատճառով:

Հիմնական գյուղմթերքների համախառն արտադրանքը


Մշակաբույս	2007-2011թթ. միջին	2011թ. համախ.	2012թ. կանխատեսում	2012թ. կանխ. / 2011թ.	2012թ. կանխ. / 2007-2011թթ. միջին
		հազ. տ	տոկոս		
Հացահատիկ և հատիկընդ.	402	441	462	5%	15%
Բանջար.	797	787	845	7%	6%
Բոստան.	184	181	195	8%	6%
Կարտոֆիլ	573	557	615	10%	7%
Պտուղ/հատապտուղ	256	239	295	23%	15%
Խաղող	213	230	240	5%	13%

Սկզբնաղբյուր՝ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն (ԱՎՕ)


ՀՀ վարչապետի հրահանգով Գյուղնախը պատրաստել է ՀՆԱ–ի բարձրացմանը ուղղված գործողությունների պլանների նախագծեր՝ ըստ ենթաոլորտների: Հիմնական ուշադրությունը կենտրոնացված է սերմաբուծությանը, տոհմային կենդանիների ներկրմանը, արհեստական բեղմնավորմանը, սուբսիդավորված տոկոսադրույքներով գյուղատնտեսության վարկավորմանը, արտահանման աջակցությանը և Երևանում գյուղմթերքի ազատ շուկաների կազմակերպմանը:

2011 և 2012թթ.–ին ձեռնարկված պետական աջակցության միջոցառումները կշարունակվեն նաև 2013թ.–ին, այդ թվում.

- Վարկատու բանկերի կողմից տրամադրվող գյուղատնտեսական վարկերի (սերմացուի, պարարտանյութի, վառելիքի ձեռք բերման համար) տոկոսադրույքների սուբսիդավորում՝ 20%-ից մինչև 14% (աղքատ ֆերմերներին՝ ավելի ցածր տոկոսադրույքներ);
- Բարձրորակ սերմացուի ապահովում (աշնանացան ցորեն, գարնանացան գարի, եգիպտացորեն);
- Մշակաբույսերի պաշտպանության համապատասխան միջոցառումների իրականացում (կրծողների դեմ պայքար);
- ՀՀ կառավարության կողմից հաստատվել է «ՀՀ ոչխարաբուծության զարգացման հայեցակարգը», որում ներկայացված են 2012–2020 թթ. ոչխարաբուծության հիմնական ուղղությունները: Հայեցակարգով նախատեսվում է կենդանիների գլխաքանակի ավելացում, տոհմային ոչխարաբուծության խթանում:



2012թ.–ի հունիս ամսին երկրի տարածքում հիմնականում դիտվել են նորմալ–լավ վեգետացիոն պայմաններ: Շատ վատթար վեգետացիոն պայմաններ դիտվել են ՀՀ արևմուտքում (Արմավիր, Արարատ, Արագածոտն և Կոտայք) և արևելքում (Սևանա լճի շրջակայքում):




Սկզբնաղբյուր՝ JRC MARS – FoodSec

Պարենամթերքի առևտուր

2012թ.–ի առաջին կեսին հացահատիկ ներմուծման ծավալները կազմել են 240,3 հազ. տ, ինչը համապատասխանաբար 11% և 39%–ով գերազանցել է նույն ժամանակաշրջանի համար 2011թ.–ին գրանցված ծավալները և 2007–2011թթ.–ի միջին ցուցանիշը:

2012թ.–ի հունվար–հունիս ամիսներին ներկրված հացահատիկ դրամական արժեքը կազմել է 63,8 մլն ԱՄՆ դոլար, 17%–ով գերազանցելով 2011թ.–ի նույն ժամանակահատվածի և 55%–ով՝ 2007–2011թթ. առաջին կիսամյակների միջին ցուցանիշները:



Սկզբնաղբյուր՝ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն (ԱՎՕ)

Պարենային անվտանգության և գյուղատնտեսության ամփոփագրի նպատակը

Ամփոփագրի նպատակն է տալ երկրի պարենային անվտանգության իրավիճակի ընդհանուր նկարագիրը՝ ուշադրություն կենտրոնում պահելով գյուղատնտեսությունը, որը երկրի զարգացման և գյուղական ու քաղաքային բնակչության պարենային անվտանգության բարելավման համար կարևոր ոլորտ է:

Ամփոփագիրը ստեղծվել է «Պարենային անվտանգության ոլորտում որոշումների կայացման գործընթացի կատարելագործմանը ուղղված տեղեկատվական համակարգերի ԵՀ/ՊԳԿ ծրագրի» աջակցությամբ, որն գործում է Եվրոպական հարևանության քաղաքականության (Արևելյան տարածաշրջան) շրջանակներում (2010–2012թթ.), ֆինանսավորվում է ԵՄ–ի կողմից և իրականացվում ՄԱԿ ՊԳԿ–ի կողմից:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել՝
Մանե Թափալցյանին՝ Mane.Tapaltsvan@fao.org
Ֆրանսուազ Տրինին՝ FrancoiseTrine@fao.org

Այլ կոմբեր:
[FAO - Policy Briefs](#)
[FAO - Global food price monitor](#)
[FAO - Crop Prospects and Food Situation](#)
[FAO - Media Center](#)
 Վեբ–կայք: www.foodsec.org